ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2023թ. թիվ 790-Ա

ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ Լ.ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 772-Ա որոշումը և հաշվի առնելով Լ.Նահապետյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը, մինչև մրցույթի արդյունքում տնօրենի ընտրությունը, դնել «ՀՀ Լոռու մարզի Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Լենա Նահապետյանի վրա:

2. «ՀՀ Լոռու մարզի Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«ՀՀ Լոռու մարզի Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Լ.Նահապետյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Ուրասարի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի տարիֆիկացիոն ցուցակով հաստատված աշխատավարձի 30%-ի չափով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

05/12/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 5
ք.Վանաձոր